նակոչութեան օրը տօնել, — ես այս աւելորդ շռայլութիւն համարելով այդ բանի համար ծախսվող փոքրիկ գումարը, ընդամենը երեք բուբլի ուղարկում եմ ձեզ յօգուտ Միացեալ ընկերութեան, խնդրելով ձեզանից, պարոն խմբագիր, բարեհաճեցէք ընդունել և հասցնել ուր հարկն է։ Շատ և շատ լաւ կը լինէր եթէ մերազնէից աւելի ունեորները և այս մասին շռայլ ծախսողները հետեւէին այս օրինակին։ Մինչդեռ մեր եղբայրակիցները Թիւրքիայում սովից և բարոյական մտաւոր սովից նեղ դրութեան մէջ են, մեր Ռուսիայի հայերի ընդհանրութիւնը զբաղվում է փոխադարձաբար հրաւէրներ պատրաստելով և անուանակոչութիւններ տօնելով։—Սա լաւ երևոյթ չէ և մինչև երբ....

Ե. Ա. Օձնեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք մի մեծ քարտէզ, որի վրա նկարված են Շիրակի հայոց նշանաւոր աւերակները։ Դրանց նկարել է պ. Կարապետ Յովհաննէսեանց և վիմագրել է տուել Մոսկվայում։

—

Տեղական լրագիրները լուր էին տարածել թէ առաջին ներքին փոխառութեան վերջին տիրաժի ժամանակ 200 հազար բուբլ գումարը տարել էր Թիֆլիսում մի ռուս գործակատար Շէյերբակով անունով։ Այժմ այդ լուրը սուտ է յայտնվում, որովհետև, ինչպէս «Голосъ» լրագրի խօսքերից երևում է, այդ գումարը տարել է մի պետերբուրգցի գերմանացի։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ սիբիրեան ժանտախտը, որին գլխաւորապէս անասուններ են զոհ գնում, բայց որից հիւանդանում և մեռնում են մինչև անգամ բազմաթիւ մարդիկ, այժմ բաւական այժով տիրում է արդէն Ս. Պետերբուրգի շրջականներում։

—

«Голосъ» լրագիրը հաղորդում է որ ռուսաց փողերի կուրսը բարձրացել է արտասահմանում այն պատճառով որ այս տարի Ամերիկայում հացը շատ առատ չէ, ուրեմն շատ թանդ է և քիչ է բերվում Եւրոպա, իսկ հացի մեծ մասը որ գործ պիտի ածվի Եւրոպայում, այս տարի Ռուսաստանից կը բերվի։ Այդ պատճառով ռուսաց փողն էլ գնի մէջ բարձրացել է։

—

Մոսկվայում քննվեցաւ Նորերումս մի հետաքրքիր պրոցէս։ Հարուստ Սօլոդովնիկովի սիրուհին, որ ունի Սօլոդովնիկովից հինգ երեխայ, դանգատվում է նրա դէմ որ երկար տարիներ իրան պահելուց յետոյ, անխնամ թողել է իր հինգ երեխաներով և ուրիշ կնոջ հետ է պսակվել։ Դատարանը իր վճռով պարտաւորեցրեց Սօլոդովնիկովին վճարել իր անհարազատ կնոջ իր հինգ երեխաներով 200,000 բուբլ գումարը, որից մօրը և չորս տղաներից իւրաքանչիւրին յատկացվում է 25 հազար բուբլ, իսկ աղջկան 75 հազար բուբլ։

—

Յուլիսի 6-ին գիշերը հրդեհ պատահեցաւ Թիֆլիսի Միջի-փողոցում։ Այրվեցան Պօպովի երեք խանութները։ Վնասը, ինչպէս ասում են, հասնում է 60,000 բուբլ գումարի։ Ապրանքները ապահովված էին։ Ասում են որ հրդեհը դիտամբ էր դրած։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Մայրաքաղաքիս Ֆար Տիւ Պոսֆոր լրագիրը Ս. Պատրիարքի հրաժարականին վրայ հետևեալ տողերն հրատարակած է իւր շաբաթ աւուր թուոյն մէջ, և այս աւուր Ճերիտէի Հավատիս Թուրք լրագիրն ալ ամբողջապէս թարգմանած։

„Հայոց ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարքին հրաժարումն այնպիսի իրողութիւն մ'է որ չը կրնար տպաւորութիւն չընել Կ. Պոլսոյ մէջ. Ներսէս Պատրիարք նշանաւոր անձ մ'է, որ վերջին ժամանակներս կարևոր դեր մը խաղաց իբրև քաղաքային և կրօնական գլուխ ազգի մը, որ Եւրոպիոյ հոգածութեան առարկայ եղաւ և է տակաւին այսօր։

„Մեզ ծանօթ չեն այն պատճառներն, որք պարտաւորած են զՆերսէս Սրբազան՝ Հայոց ազգային գործոց տնօրէնութիւնը թողլու, այնպիսի ժամանակ մը, ուր Հայք առաւել պէտք ունէին իւր լոյսերուն։ Մեր բոլոր գիտցածն այս է թէ իւր անժխտելի գործունէութիւնն ու հայրենասիրութիւնն իւր դիրքը սաստիկ դժուարացուցած էին, և վերջին օրերս ինք ալ համզուած էր որ իւր պատրիարքական աթոռին վրայ կենալը կասկածանաց առիթ եղած էր, և թէ իւր ամենափոքր գործերը մեկնութեանց և երբեմն խիստ քննադատութեանց առարկայ կը լինէին։

„Կարելի է որ Ն. Սրբազնութեան տեսակէտով, Հայկական խնդրոյն ձեռք առնուելու վայրկենին իւր գործէ քաշուիլն առաւել օգտակար լինի իւր ազգայնոց՝ քան թէ վնասակար։ Բայց Ներսէս Սրբազանն ի մօտուստ ճանաչողներն, որք կրցած են գնահատել նորա խորին հմտութիւնն, առաքինութիւններն ու բարեմասնութիւններն, որովք ժամանակիս ամենէն նշանաւոր բարձրասաստիճան եկեղեցականներէն մին եղած է, ճշմարիտ դժբաղդութիւն մը կը համարին նորա հրաժարականն, որ առանց ազգեցութեան չը կրնար մնալ Հայ ազգին բաղդին վրա։"

Եոգղատէն լուր կուտան թէ Եոզղատի մէջ Ազգային Սահմանադրութիւնը գործադրելու համար՝ Ազգ. Վարչութեան կողմէ Դեր. Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեան տեսուչ կարգուած լինելով, այս օրերս Եոզղատ հասեր և սիրով ընդունուեր է ժողովրդեան կողմէ։

(Մասիս)

ԳԵՐՄԱՆԻԱ

Ընտրութիւնների ժամանակի մօտենալու հետ սաստկանում են և կուսակցական կռիւները և մրցումները Գերմանիայի մէջ։ Կառավարչական լրագիրները, պահպանողական ճառախօսները և աստիճանաւորները, վարչական գլխաւոր գործիչները և երբեմն ինքն իշխան Բիսմարկ՝ դրանք բոլորն էլ հաւատացնում են, որ գերմանական ներքին քաղաքականութեան այժմեան ուղղութիւնը ամենալաւն է և որ անհրաժեշտ է գերմանական կանցլերի բոլոր գործերին անպայման հաւատ ընծայել։ Ամեն օր ազատամիտների և առաջադէմների վրա մեղադրանքներ են դնվում։ Նրանց են մեղաւոր համարում, որ վերջին տաս տարիների ընթացքում գերմանական ներքին կեանքը կանոնաւորապէս չէ զարգացել։ Որովհետև Գերմանիայի տնտեսական դրութիւնը բաւական վատ է, ուրեմն մեղաւոր է պարլամենտական կարգը, որ արգելում էր կառավարութեանը պաշտպանել ժողովրդական շահերը ըստ իր կամեցողութեան, մեղաւոր են ազատ առևտրի կողմնակիցները, ամեն տեսակ բռնութիւնների հակառակորդները և հասարակական կեանքի ազատութեան պաշտպանները։ Եթէ հասարակութիւնը և ժողովուրդը անբաւական են հարկերի ծանրութենից և բողոքում են պրուսական զինուորականութեան դէմ, ուրեմն դարձեալ մեղաւոր են ազատամիտ լրագիրները և ընդդիմադրական կուսակցութեան անհանդիստ ճառախօսները, որոնք ժողովրդի մէջ վնասակար գաղափարներ են տարածում։ Պաշտօնական այդ գործիչները կառավարութիւնը միակ մարմին են համարում, որ հոգում է ժողովրդական շահերը պաշտպանելու համար և որ ընդդիմադրում է ազատամիտների և առաջադէմների վնասակար ձգտումներին։

Իշխան Բիսմարկի մեծագործութիւնների և բազմաթիւ աստիճանաւորների ճնշմանը ենթարկված աղքատ դասը դեռ ևս տրամադրված չէ հաւատալ կիսապաշտօնական լրագիրներին և կուրօրէն հետևել Բիսմարկի նախագծին։ Գերմանիայի մէջ ազատամտութիւնը խոր արմատներ է թողել և ժողովուրդը վաղուց սովորել է տեսնել ընդդիմադրական կուսակցութեան անդամների շարքում իր շահերի իսկական պաշտպաններին, իսկ պահպանողականներին և աստիճանաւորներին նոյն ժողովուրդը համարել է իր բնական թշնամի։ Գերմանական ժողովրդի այդ զգացմունքները և կարծիքները արմատականապէս փոփոխելու համար շատ պայմաններ են հարկաւոր, որոնք այժմ չեն նշմարվում ժամանակակից Գերմանիայի քաղաքական կեանքի մէջ։

Գերմանական կուսակցական այդ կռիւներին միջամտեց յայտնի դիտնական փիլիսոփայ Էդուարդ Ֆոն-Հարտման։ Գերմանական „Gegenvart" լրագրի մէջ առաջ նա մի յօդուած տպեց գերմանական ժամանակակից պարլամենտի դէմ, իսկ յետոյ—մի ուրիշ աւելի էլ խիստ յօդուած պահպանողականների և յետադիմականների դէմ։ Առաջին յօդուածը չափազանց ուրախացրեց պահպանողականներին և նրանք բարձրաձայն մատնացոյց էին լինում անկողմնապահ փիլիսոփայի խօսքերի վրա, իսկ երկրորդ յօդուածից յետոյ նրանք ստիպված էին լռել։

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական կառավարութիւնը պնդում է, որ հիւսիսային Աֆրիկայի մէջ ՀԷասված սպանիացիները իրաւունք չունեն վարձատրութիւն պահանջել այն պատճառով, որ պետութիւնը անկարող է վարձատրել պատերազմական անցքերի և անակնկալ դէպքերի պատճառով ՀԷասվածներին։—Մի և նոյն պատճառները առաջ բերեց Թիերը 1870 թ. պատերազմի ժամանակ և ինքը սպանիական կառավարութիւնն էլ չը բաւականացրեց կարլիստների պատերազմից ՀԷասված ֆրանսիացիներին։ Այնու ամենայնիւ ֆրանսիական կառավարութիւնը խօստովանվում է, որ ՀԷասվածները կարող են յոյս ունենալ Ֆրանսիայի օգնութեան վրա, որ այն չափով կը հասցնվի, որքան կառավարութիւնը հարկաւոր և կարելի կը համարի։

Մինիստրութիւնը տեղեկութիւն է ստացել Սֆակս քաղաքի ռմբակոծութիւնը ըսկսելու մասին։ Այդ քաղաքը վերցնելու համար ֆրանսիական օգնական նոր զօրքեր են ուղարկված։ Հիւսիսային Աֆրիկայի մէջ պատահած անցքերի պատճառով պատերազմական մինիստրը վճռել է չը պակասցնել Միջերկրական ծովի պատերազմական նաւատորմի ոյժերը։ Փոստային նաւերից մէկը լուր է բերել, որ ֆրանսիական զրահակիր նաւերից արձակված ռումբերով քանդված են Սֆակսի բոլոր ամրոցները, մեծ մզկիթը և մահմեդականների թաղը։ Ապստամբները շարունակ ընդդիմադրում են։

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը վերջացնում է բիւդժետի քննութիւնը։ Պահպանողական կուսակցութեան անդամներից մէկը մտադիր է կառավարութեան հարց առաջարկել հիւսիսային Աֆրիկայի և Տունիսի մէջ կատարվող անցքերի մասին։ Մինիստրութիւնը սկսել է եռանդով գործել և անդադար խորհուրդներ կազմելով, քննում է Ալժիրիայի մէջ պատահող պատերազմական և քաղաքական անցքերը։

Պաշտօնական հեռագիրների համեմատ Սֆակսի շրջականերում հաւաքված են մոտ 15,000 արաբներ։ Քաղաքի բնակիչները մտադիր էին խնդրել ֆրանսիացիներից, որ նրանք դադարեցնեն քաղաքի ռմբակոծութիւնը, բայց արաբների առաջնորդները վճռեցին չը յանձնել քաղաքը ֆրանսիացիներին։ Ափի վրա ամրացած դիրքերում թնդանօթներ են դարսված, որոնց վրա բարձրացրած է մարգարէի կանաչ դրօշակը։ Այդ ամրութիւնները արգելում են ֆրանսիական զօրքերին ափ իջնել։ Բացի Սֆակսից ապստամբութիւնը տարածված է Ալժիրիայի այլ կէտերում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 4 յուլիսի 81

Թէպէտ և ազգ. ժողովը յունիս 30-ին պիտի գումարուէր պատրիարքի հրաժարականի խնդրովը զբաղելու համար, սակայն վերջէն աւելի յարմար սեպուեցաւ հինգշաբթի առաւօտ ժողովք ընել։ Յուլիս 4-ին առաւօտ ժամը 9-ին ատեանը բացուեցաւ. երեսփոխանաց ստուար մեծամասնութիւն մը ներկայ էր, այնպէս որ բացակայք խիստ քիչ էին։—Նիստը դռնիակ ընելու հարկ չը տեսնուեցաւ։ Առեղական գործոցութիւններէ վերջը պատրիարքի հրաժարականը ընդունելու կամ մերժելու խնդիրը խորհրդածութեանց առարկայն կըլլայ։—Ժողովուրդը եկեղեցւոյ չորս կողմը պատեր է, դէմքերը շատ սպառնական են։

Հազարաւոր ստորագրութեամբ հանրագիրներ կը տրուին ժողովոյն որ պատրիարքի հրաժարականը մերժուի։ Ազգային այս ցոյցը մեծ կարևորութիւն ունէր. կառավարութիւնը պէտք էր իմանալ թէ Ներսէս ինչ աստիճան ժողովրդականութիւն կը վայելէ և թէ ազգային քաղաքականութեան ճշմարիտ ներկայացուցիչը կը սեպուի։

Այդ երկար վիճաբանութեանց և ճառերու ժողովոյ նախագահ պ. Մերիէմ-զուլի կամիտէ յայտնուած կարծիքները և հետևեալ առաջարկութիւնը կը ներկայացնէ, որ կրնար հաշտեցնել ամեն գաղափարներ։

«Ազգ. ժողովը ցաւելով իմացաւ իր պատգամաւորութեան տեղեկագրէն որ Ս. Պատրիարք հայրը պնդեր է իր հրաժարականին վրայ։ Դիտէ նաև որ նորին ամենապատուութեան անձին որակարութիւնը չարաչար կը նեղէ զինքն պատրիարքական գահուն վրայ։ Եւ սակայն նկատելով որ Ամեն. Ներսէս Ս. Պատրիարք հօր վրայ ընդհանուր ազգին ունեցած անսահման վստահութենէ զատ, ազգին շահուց գլխովին անհամաձայն է իրաց արդի վիճակին մէջ պատրիարքական խնդիր յարուցանել և թէ Վարչ. խորհուրդն ըստ որոշման Ազգ. ժողովոյ որ ի նիստ Ա. բանակցութեան մէջ է ընդ սրբազան պատրիարքին կը մերժէ խպաս իր սիրեցալ պատրիարքի հրաժարականն և այս առթիւ ևս պատրաստակամութիւն յայտնելով ամեն կարելի դիւրութիւն ընծայել նմա և հրաւէր կը կարդայ Նորին Սրբազնութեան ազգասիրութեանն, որ ազգին կամաց առջև բարեհաճի չարունակել իր զոհողութիւնն պատրիարքական պաշտօնը պահելով, մինչև որ պարագաները ներեն մեզ դայն ընդունել։»

Պ. Նախագահի այս առաջարկը կընդունվի ժողովքէն և պատգամաւորութիւն մը կընտրուի որ զոհվքէն և պատգամաւորութիւն մը կընտրուի որ հրաժարականը ետ առնու։ Խորէն եպիսկոպոս, Մատթէոս եպիսկոպոս, կրօնական գործոց տեսուչ Սիմոն եպիսկոպոս, ժողովոյ նախագահն պ. Մերիէմ-զուլի և ուրիշ մի քանի երեսփոխանք պատգամաւորութիւնը կը կազմեն։—Կէսօրը անցած է և ժողովը աշխատութիւնները վերջացուցած ըլլալով բաժնուելու վրայ է. յանկարծ մեծ աղմուկ մը կը տիրէ, ժողովուրդը կը խուժէ ժողովոյ սրահը, գաւազանի հարուածները կը սկսին տեղալ, աթոռները կը բարձրանան ու կիջնան, երեսփոխանք սարսափահար կը սկսին